Ալվինա Աղաբաբյան

ԼՂԻՄ-Ի ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.

Արցախ, ԼՂԻՄ, Ադրբեջան, խտրական քաղաքականություն, տարածքային յուրացումներ, սահմանների վերաձևում

1920 թ. ապրիլի 28-ին Խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակը մտնում է Բաքու, վերացնում թուրքական բանակի կողմից հիմնված Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը և հիմնում նորը՝ Խորհրդային Ադրբեջանը*: Չնայած այն հանգամանքին, որ ԱդրԽՍՀ-ն հիմնվում է որպես մեկ տիտղոսակիր ազգ չունեցող ոչ ազգային (ինտերնացիոնալ) հանրապետություն, որտեղ հայերը դիտվում էին պետականակերտ ազգերից մեկը, անդրկովկասյան թուրքերի (ռուսական աղբյուրներում՝ կովկասյան թաթարներ) ձեռքում հայտնված Բաքուն ի սկզբանե ձեռնամուխ է լինում հանրապետության հետևողական ադրբեջանականացմանը (թուրքացմանը):

Ակնհայտ էր, որ իշխանության գլուխն անցած անդրկովկասյան թուրքերի համար հանրապետության ադրբեջանականացման գործընթացի գլխավոր խոչընդոտը հայերն էին, ովքեր առանձնանում էին իրենց կարգավիճակով, ազգային կայացած ինքնությամբ և դավանանքի ու մշակութային յուրատիպությամբ: Եթե հանրապետության տեղաբնիկ իսլամադավան ժողովուրդների ադրբեջանականացումն իրականացվում էր բռնի ձուլման քաղաքականության միջոցով[1], ապա հայերի

---

* Խորհրդային իշխանություններն այդ շրջանում հնարավոր չգտան Արևելյան Անդրկովկասում տեղի թուրքերի՝ կովկասյան թաթարների ազգային պետության հիմնումը: Երկրամասը բազմաթիվ տեղաբնիկ ազգերի՝ հայերի, թալիշների, լեզգիների, թաթերի, ուդիների և այլ ազգությունների ընդհանուր հայրենիքն էր, իսկ Բաքուն անգամ թուրքական զորքերի կազմակերպած ջարդերից հետո էլ թուրք-թաթարական դիմագիծ չուներ: Ազգային հարցը լուծելու նոր մոդել էր անհրաժեշտ՝ ի դեմս ինտերնացիոնալ, արտազգային Ադրբեջանի, որը ժողովուրդների սոցիալիստական բարեկամության և եղբայրության օրինակ պիտի հանդիսանար ողջ խորհրդային տարածքի համար, ինչպես նաև հարթակ՝ դեպի Արևելք «կարմիր հեղափոխության» տարածման համար: Միայն 1936 թ. ԽՍՀՄ սահմանադրության ընդունումից հետո անդրկովկասյան թուրքերին, որոնք մինչ այդ տեղաբնիկ իսլամադավան ժողովուրդների հետ միասին հանդես էին գալիս «մահմեդականներ» ընդհանուր անվամբ, Ստալինի կողմից տրվեց ադրբեջանցիներ «էթնանունը», ինչի շնորհիվ ինտերնացիոնալ Ադրբեջանը հետզհետե «դարձավ» ազգային հանրապետություն, անդրկովկասյան թուրքերն էլ, «վերածվելով» ադրբեջանցիների, մեխանիկորեն ստացան հանրապետության տիտղոսակիր «ազգի» կարգավիճակ:

[1] Իսլամադավան բնիկ ժողովուրդների ձուլումն արագացնելու համար 1930-ականներից նրանց համար մտցվեց հատուկ հարկատեսակ՝ լեզգի փուլու կոչվածը, որը նրանք պետք է վճարեին իրենց երեխաներին մայրենի լեզվով կրթություն տալու համար: Արդյունքում՝ հարկից խուսափելու համար շատ թալիշներ, լեզգիներ և այլն «դառնում էին» ադրբեջանցիներ… Բնիկների ձուլման և ադրբեջանականացման քաղաքականությունը լավագույնս արտահայտվում էր պաշտոնական վիճակագրության մեջ: Եթե, օրինակ, 1926 թ. մարդահամարի տվյալներով հանրապետությունում

պարագայում Ադրբեջանն այլ լուծում էր գտել. Բաքվի ղեկավարների կողմից գործի էր դրվել տնտեսական և քաղաքական հետապնդումների միջոցով Ադրբեջանին բռնակցված հայկական տարածքներից հայ ժողովրդին դուրս մղելու և հնարավոր բոլոր միջոցներով այդ տարածքները յուրացնելու քաղաքականությունը:

ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի հուլիսի 5-ի հայտնի որոշմամբ, որն ընդունվել էր նման հարցերի լուծման իրավասություն չունեցող երրորդ երկրի կուսակցական մարմնի կողմից և ընթացակարգային կոպիտ խախտումներով, Լեռնային Ղարաբաղը, որպես մարզային ինքնավար կազմավորում, բռնակցվում է Ադր. ԽՍՀ-ին: Մոտ երկու տարի տևած ձգձգումներից և ԼՂ-ին ինքնավարություն չտալու կամ հարցը մոռացության մատնելու փորձերից հետո 1923 թ. հուլիսի 7-ի դեկրետով[1] Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը դժկամորեն և, ըստ էության, հարկադրաբար կազմավորում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը: Դեկրետը, սակայն, խախտելով Կովբյուրոյի հուլիսի 5-ի որոշումը, այն է՝ կազմավորել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ **ողջ ԼՂ-ից**, հայտարարում է Լեռնային Ղարաբաղի «հայկական հատվածից» ինքնավար մարզ կազմավորելու մասին՝ Շուշիի փոխարեն էլ մարզկենտրոն ունենալով Խանքենդի (Վարարակն) բնակավայրը: Այս կերպ Ադրբեջանի ԽՍՀ-ն ի սկզբանե Լեռնային Ղարաբաղից կտրում և մարզի սահմաններից դուրս է թողնում Շահումյանի, Խանլարի, Քարհատի, Շամքորի, Գետաբեկի, Քարվաճառի, Քաշաթաղի և ԼՂ հարավային շրջանները, ասել է թե՝ Լեռնային Ղարաբաղի հարթավայրային շրջանը, արևմտյան հատվածը և ողջ հյուսիսային տարածքը՝ Գյուլիստանն ու Գանձակի լեռնային հայկական շրջանները: Այսպիսով, ընդամենը մեկ որոշմամբ 11.5 հազար քառակուսի կմ տարածք ունեցող պատմական Արցախից օտարվում և յուրացվում է նրա զգալի հատվածը՝ մոտ 7 հազար քառակուսի կմ տարածություն: Ադրբեջանի համար, իհարկե, այսքանը բավարար լինել չէր կարող:

Չկարողանալով խուսափել իրեն բռնակցված հայկական տարածքներում խորհրդային տիպի առանձին ազգային-պետական միավորի ստեղծումից, ինչն անընդհատ պիտի բոլորին հիշեցներ ԼՂԻՄ-ի ոչ ադրբեջանական (թուրքական) լինելու փաստը, Ադրբեջանի իշխանությունները վճռում են երկրամասի յուրացումն ու ադրբեջականացումն իրականացնել այլ ճանապարհով: Խնդիր է դրվում «աննկատ» հայաթափել մարզը և ժողովրդագրական, էթնիկական առումով այն դարձնել թուրքական տարածք, ինչի արդյունքում՝

ապրում էր 77.3 հզ թալիշ, 1939 թ. տվյալներով՝ 87.5 հզ, ապա 1959 թ. մարդահամարի համաձայն Ադրբեջանում մնացել էր ընդամենը 100 թալիշ, իսկ արդեն 1970-ականներին Ադրբեջանում բնակվող ազգությունների մեջ թալիշներ չկային ընդհանրապես: Նույն պատկերն էր նաև մյուս ազգությունների դեպքում: Բնիկ ժողովուրդները գնալով «անհետանում էին», փոխարենը սրընթաց «աճում էր» ԱդրԽՍՀ-ի «տիտղոսակիր ազգության» թվաքանակը: Տե՛ս Мелик-Шахназарян Л., Хачатрян А., Этнополитика Азербайджана, Ереван, 2007, с. 27-32.

[1] Нагорный Карабах в 1918-1923 гг. (сбор. документов и материалов), Ереван, 1992, стр. 669, 670. К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР.

1918 - 1925: Документы и материал, Баку, 1989. с. 152, 153. Собрание узаконений и распоряжений Рабоче-Крестьянского Правительства АССР за 1923 г. Баку, 1923, с. 384-385.

ա. ինքնորոշման սուբյեկտ հանդիսացող Արցախի ժողովրդի բացակայության պարագայում կվերանար այդ տարածքներում ազգային-պետական կազմավորման՝ հայկական ինքնավարության գոյության անհրաժեշտությունը, այն կլուծարվեր՝ վերածվելով ԱդրԽՍՀ-ի մեկ կամ մի քանի շրջանների,

բ. այլևս ոչինչ չէր հիշեցնի այդ տարածքների հայկական և հայաբնակ լինելու հանգամանքը,

գ. կկասեցվեին հայերի հետագա հնարավոր «նկրտումները» և «ոտնձգությունները» երկրամասի նկատմամբ:

Արցախի ժողովրդին իր իսկ սեփական, պատմական հողերից «ինքնակամ» բռնագաղթեցնելու ծրագրերն իրականություն դարձնելու համար Բաքուն ԼՂԻՄ-ի նկատմամբ ի սկզբանե որդեգրում է ազգային խտրականության քաղաքականություն, որը դրսևորվում էր մարզի կենսագործունեության բոլոր ոլորտներում, անգամ մարզի անվանման ընտրության հարցում:

Խորհրդային Միությունում, որպես կանոն, ինքնավար հանրապետությունները և մարզերն անվանվում էին այնտեղ ապրող տեղաբնիկների անուններով: Բացառություն էին կազմում տարբեր տարիներին ԽՍՀՄ-ում կազմավորված ընդամենը 6 ինքնավարությունները, որոնց անվանումները կրում էին զուտ աշխարհագրական բնույթ, և նրանց մեջ որևէ հիշատակություն չկար ինքնավար հանրապետության կամ մարզի տեղաբնիկ էթնոսի մասին: Դրանք էին Ղրիմի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, Դաղստանի ԻԽՍՀ-ը, Աջարական ԻԽՍՀ-ը, Լեռնային Բադախշանի Ինքնավար Մարզը, Նախիջևանի ԻԽՍՀ-ն և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը: Եվ ամենևին պատահական չէ, որ ԽՄ-ում գոյություն ունեցող այդ վեց «քողարկված» ինքնավար կազմավորումներից երկուսը խորհրդային Ադրբեջանին բռնակցված հայկական տարածք-ների վրա ձևավորված հայկական ինքնավարություններն էին: Նախիջևանի ԻԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի անվանումների հարցում Ադրբեջանը միանգամայն մտածված էր գործել: Ինքնավարությունների անվանումներից «հայկական» բառը դուրս թողնելով և էթնիկական հասկացությունները փոխարինելով աշխարհագրականով՝ Ադրբեջանի իշխանությունները միաժամանակ մի շարք խնդիրներ էին լուծում.

ա. ստվեր նետել խորհրդային իշխանությունների կողմից Հայաստանից օտարված բնիկ հայկական և հայաբնակ տարածքները նորաստեղծ Ադրբեջանին հանձնելու փաստի վրա,

բ. քողարկել այդ տարածքներում տեղաբնիկների՝ հայերի նկատմամբ Ադրբեջանի կողմից տարվող էթնիկ զտումների քաղաքականությունը,

գ. ինքնավարություններն «անոնիմ-անանուն» դարձնելով՝ քողարկել այդ տարածքների հայապատկան և հայաբնակ լինելու հանգամանքը և էլ ավելի դյուրին ու աննկատ դարձնել այդ տարածքների թուրքացումը: Անդեմ «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ» անվանումը պատկերացում չէր տալիս տարածքային այդ կազմավորման ազգային պատկանելության մասին: Անվանումից ելնելով՝ կարելի էր մտածել, որ ԼՂԻՄ-ում ապրում են ղարաբաղցիներ (Նախիջևանում՝ նախիջևանցիներ),

որոնց հայ լինելու մասին ոչինչ չէր վկայում: Նույն հաջողությամբ մարզի բնակիչ դարաբաղցին կարող էր լինել ինչպես հայը, այնպես էլ թուրքը, և եթե մի օր մարզի ողջ հայ բնակչությունը «փոխարինվեր» ադրբեջանցի թուրքերով, արտաքին աշխարհի համար դա նկատելի չէր լինի*:[1]:

Ավելին, քողարկելու, կոծկելու համար այն իրողությունը, որ ԼՂԻՄ-ն ապօրինաբար ձևավորվել էր ոչ թե ողջ Լեռնային Ղարաբաղի տարածքում, այլ նրա ընդամենը փոքր հատվածի վրա, 1936 թ. մարզի անվանման «փոքրիկ» ձևափոխություն կատարվեց: 1923-1936 թթ. մարզը պաշտոնապես անվանվեց էր «Автономная Область Нагорного Карабаха» (АОНК): Այս անվանումը բացահայտ մատնանշում էր, որ մարզը Լեռնային Ղարաբաղի ընդամենը ինքնավար մի հատվածն է, ինչը և համապատասխանում էր իրականությանը: 1936 թ. հետո, երբ ընդունվեց ԽՍՀՄ նոր (ստալինյան) սահմանադրությունը, մարզը պաշտոնապես վերանվանվեց «Нагорно Карабахская Автономная Область» (НКАО)[1]: Մարզի անվանման նման ձևակերպումը ենթադրում էր, որ մարզն ընդգրկում էր Լեռնային Ղարաբաղն ամբողջությամբ, այլ ոչ թե նրա մի հատվածը: Դա, իհարկե, աշխարհագրական և քաղաքական իրողությունների լիակատար նենգափոխում էր և խեղաթյուրում, որը կոչված էր արտաքին աշխարհից թաքցնելու Արցախի հսկայական տարածքների օտա-րումը և ադրբեջականացումը:

Արցախի յուրացմանն ուղղված Ադրբեջանի քայլերը, բնականաբար, այսքանով չէին սահմանափակվում: Բավական է միայն նայել խորհրդային տարիներին տպագրված տարածաշրջանի պաշտոնական քարտեզներին, հասկանալու համար, որ անգամ Արցախի մի փոքր հատվածում կազմավորված մարզի սահմաններն ու տարածքները տասնամյակներ շարունակ անընդհատ վերածվել են և ենթարկվել փոփոխությունների, իհարկե, ոչ հօգուտ մարզի և արցախահայության: Ինքնավար մարզի վարչատարածքային վերածևումների արդյունքում մի շարք հայկական բնակավայրեր և հողատարածքներ, որոնք իրենց աշխարհագրական դիրքով և ռազմավարական նշանակությամբ կարևոր կապող օղակ էին Սյունիքի և Արցախի միջև, աստիճանաբար պոկվում էին մարզից և բռնակցվում նորաստեղծ ադրբեջանական շրջաններին:

Իր կազմավորման սկզբնական շրջանում ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ ընդհանուր սահման ուներ, որն անցնում էր Հագարի գետով՝ Գորիսի շրջանի Տեղ և Կոռնիձոր գյուղերի տարածքով (նկար 1): Լեռնային Ղարաբաղն

---

* Այդ կերպ խորհրդային իշխանության 70 տարիների ընթացքում հայկական Նախիջևանը զրկվեց իր հայ բնակչությունից և թուրքացվեց: Ադրբեջանական իշխանությունները տեղաբնիկ հայ նախիջևանցիներին աստիճանաբար դուրս մղեցին շրջանից՝ «փոխարինելով» նրանց թուրք «նախիջևանցիներով», և այդ ամենը խորհրդային քաղաքացիների աչքերի առջև, բայց նրանց գիտությունից դուրս: Նույն գործընթացը տեղի էր ունենում նաև ԼՂԻՄ-ում:

[1] Մարզի նոր անվանումը պաշտոնապես ամրագրվում է ԽՍՀՄ 1936 թ. սահմանադրության մեջ. «В Азербайджанской Советской Социалистической Республике состоят Нахичеванская Автономная Советская Социалистическая Республика и Нагорно-Карабахская автономная область». (Конституция СССР (утверждена постановлением Чрезвычайного VIII Съезда Советов СССР от 5 декабря 1936 г.), глава II, статья 24). http://constitution.garant.ru/history/ussr-rsfsr/1936/red_1936/3958676/

ադրբեջանականացնել ցանկացող Ադրբեջանի համար այս իրողությունը լուրջ խոչընդոտ կարող էր հանդիսանալ: ԼՂԻՄ-ը Հայաստանից վերջնականապես կտրելու նպատակով մարզի կազմավորումից օրեր անց՝ 1923 թ. հուլիսի 21-ին, Ադրբեջանի ԽՍՀ կենտգործկոմի նախագահության և հանրապետության կոմիսարների խորհրդի որոշմամբ արհեստականորեն ստեղծվում է Կարմիր Քրդստանի գավառը:

ՆԿԱՐ 1[1]

Քուրդիստանի գավառը գտնվում էր Խորհրդային Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի միջև և ներառում էր հետագայում կազմավորված Քելբաջարի, Լաչինի և մասամբ Կուբաթլուի շրջանները: Այդ տարածքները մտնում էին պատմական Հայաստանի Արցախ և Սյունիք նահանգների մեջ և ընդհուպ մինչև XVIII դարը գրեթե բացառապես հայաբնակ էին: XVIII դարից սկսած ռուս-թուրքական, թուրք-պարսկական պատերազմների արդյունքում այդ շրջանների հայ բնակչության մի մասը կոտորվել էր, մի մասն էլ՝ հարկադրված բռնել գաղթի ճանապարհը: Ղարաբաղի դատարկված այդ տարածքներն սկսել էին արագորեն բնակեցվել իսլամադավան քոչվոր ցեղերով, հատկապես՝ քրդերով: 1918-1920 թթ. մուսավաթական Ադրբեջանն Արցախի և արցախահայության դեմ իր պայքարում օգտագործում էր նաև քրդական գործոնը: Անդրկովկասյան թուրքերի համար հիմնական հրամայականը Լեռնային Ղարաբաղի արևմտյան լեռնային շրջանների վերջնականապես հայաթափումն էր և հայկական պետության ու Ղարաբաղի միջև էթնիկական անջրպետի ստեղծումը, որից հետո միայն հնարավոր կլիներ ժողովրդագրական առումով ԼՂ-ն անջատել Հայաստանից՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Քրդական վարչատարածքային կազմավորումը գոյատևեց ընդամենը մի քանի տարի՝ 1923-1930 թթ.[2]: Գավառը լուծարելուց հետո այդ տարածքում ձևավորվեցին ԱդրԽՍՀ առանձին վարչական միավորներ՝ Լաչինի, Քելբաջարի և մասամբ Կուբաթլուի շրջանները: Ընդ որում՝ ԼՂԻՄ-ի այն հատվածը, որը սահմանակցում էր Հայաստանի հետ, լռելյայն դուրս բերվեց մարզի կազմից և մտցվեց Լաչինի շրջանի մեջ: Այդ կերպ

[1] ՀԽՍՀ-ի պաշտոնական քարտեզ, տպագրված ԽՍՀՄ-ում, Большая Советская Энциклопедия, т. 3, Москва, 1926 г., с. 417.

[2] 1923 թ. հուլիսի 16-ից 1929 թ. դեկտեմբերի 8-ը՝ որպես Քրդստանի գավառ, 1930 թ. մայիսի 25-ից 1930 հուլիսի 23-ը՝ որպես Քուրդիստանի օկրուգ, որի կազմի մեջ նախկին գավառի տարածքից բացի մտան նաև Զանգելանի շրջանն ամբողջությամբ և Զաբրայիլի շրջանի մի մասը: Կարմիր Քրդստանի ստեղծման պատմության, էթնոքաղաքական իրավիճակի, ինչպես նաև նրա կազմավորման ու լուծարման աշխարհաքաղաքական ասպեկտների մասին ավելի մանրամասն տես Բաբայան Դ., Կարմիր Քրդստան. կազմավորման և լուծարման աշխարհաքաղաքական ասպեկտները, «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (10), Երևան, 2005 թ. էջ 83-106:

ԼՂԻՄ-ը կորցրեց Հայաստանի հետ իր ընդհանուր սահմանը և վերածվեց անկլավի Խորհրդային Ադրբեջանի տարածքում:

1923 թ. օգոստոսի 6-ին Ադրբեջանի կենտգործկոմի հրամանով Լեռնային Ղարաբաղի՝ ԼՂԻՄ-ի սահմաններից դուրս թողնված մնացյալ տարածքներում ստեղծվեցին նաև Աղդամի և Ջեբրայիլի գավառները[1]: Դիզակի (հետագայում՝ Հադրութի) շրջանի նախալեռնային էդիլլուի և Տողի ենթաշրջանների միջև սեպ խրելու նպատակով նրանց միջև գտնվող Հողեր հայկական գյուղը 1938 թ. դուրս բերվեց շրջանի ենթակայությունից և միացվեց հարևան Կարյագիոյի շրջանին (հետագայում՝ Ֆիզուլիի շրջան)[2]: Հադրութի շրջանի մեկ այլ՝ Հարար գյուղը, որը գտնվում էր Հագարի գետի ձախ ափին և կապող օղակ էր հանդիսանում Արցախի և Սյունիքի միջև, 20-ական թթ. վերջերին կրկին կամայականորեն դուրս բերվեց մարզի կազմից և բռնակցվեց Լաչինի շրջանին՝ անվանափոխվելով Ջաֆարաբադի[3]: Հայկական ճարտարապետության գոհարներից մեկը՝ Դադի վանքի համալիրը, իրեն հարող Մեսրոպավան գյուղի հետ անջատվեց Ջրաբերդից (Մարտակերտի շրջան) և միացվեց Քյալբաջարի շրջանին՝ միմյանցից տարանջատելով Խաչենը և Սևանի ավազանը: Նույն կերպ Հին Շեն հայկական գյուղը հարակից բնակավայրերի հետ միասին «հայտնվեց» Լաչինի շրջանում՝ վերածվելով հսկայական արհեստական խոռոչի Շուշիի և Հադրութի շրջանների միջև[4]: Այդ բոլոր գյուղերն ու բնակավայրերը, որպես կանոն, ժամանակի ընթացքում հայաթափվեցին, բնակեցվեցին ադրբեջանցիներով և ամբողջապես թուրքացվեցին:

Ադրբեջանի իշխանությունների կողմից ԼՂԻՄ-ի կամայական վերաձևումները և տարածքային յուրացումները, իհարկե, այսքանը չէին: Մարզի այս կերպ մասնատման հետ զուգահեռ հանրապետության ղեկավարները մարզի տարածքից նոր հողակտորներ պոկելու և օտարելու այլ մեխանիզմ էլ էին կիրառում: ԼՂԻՄ-ի ներսում և հատկապես ներմարզային ճանապարհային հանգույցների վրա և այն վայրերում, որտեղ ծրագրվում էր ճանապարհ կառուցել, իրար հետևից հիմնվում կամ առանձնացվում էին թուրքական նոր անկլավ-գյուղեր, որոնք անմիջապես դուրս էին

---

[1] К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918 - 1925: Документы и материалы, Баку, 1989. с. 173-174.

[2] Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղ. Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան (1920-1988 թթ.), Ստեփանակերտ, 2003 թ., էջ 73:

[3] Այստեղ հարկ է նշել, որ հայկական տարածքների յուրացման ծրագրի մեջ Ադրբեջանը հատուկ տեղ էր հատկացնում հայկական պատմական տեղանունների թրքացմանը (հար և նման իր ավագ եղբայր Թուրքիային, որը փոփոխում և թրքացնում էր հայկական տեղանունները ամբողջ Արևմտյան Հայաստանի տարածքում): Այդպես հայկական Հակը դարձավ Մինքենդ, Գետաշենը՝ Չայքենդ, Քարահատը՝ Դաշքեսան, Խնձորուտը՝ Ալմալու, Սևքարը՝ Քարադաշ, Քարինտակը՝ Դաշտալի, Սարիշենը՝ Բուզլուխ, Քարվաճառը՝ Քելբաջար, Քաշաթաղն ու Բերձորը՝ Լաչին, Աղստևը՝ Ակստաֆա, Միջնավանը՝ Մինջևան, Մարտակերտը՝ Ագդերե, Մարտունին՝ Խոջավենդ, Վանքը՝ Վանքլու, Ավետարանոցը՝ Չանախչի, Քարագլուխը՝ Դաշբաշի, Շակաշենը՝ Խանլար, Խանձաձորը՝ Աղաջաքենդ, Մեծշենը՝ Ուլու Ղարաբակ, Մոխրաթաղը՝ Կիլիկ Ղարաբեկ, Նորագյուղը՝ Թազաքենդ, Հաթերքը՝ Հասանրիզ և այլն: Նույնը տեղի էր ունենում նաև աշխարհագրական այլ անվանումների հետ:

[4] Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղ. Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան (1920-1988 թթ.), Ստեփանակերտ, 2003 թ., էջ 74:

բերվում մարզի ենթակայությունից և վարչականորեն վերաենթարկեցվում հարևան ադրբեջանական շրջաններին[1]: Այդպես ստեղծվեցին, օրինակ, Վերին Վեյսալի (Մարտունու շրջան) և Աղդաբան (Մարտակերտի շրջան) թուրքական գյուղերը, որոնք միանգամից միացվեցին համապատասխանաբար Ֆիզուլու և Քելբաջարի շրջաններին:

Հարկ է նշել, որ ԼՂԻՄ-ից պոկված յուրաքանչյուր հայկական գյուղի հետ միասին մարզից անջատվում և հարևան ադրբեջանական շրջաններին էին բռնակցվում նաև գուղապատկան վարելահողերն ու արոտավայրերը, ինչը մեծ հարված էր մարզի գյուղատնտեսությանը: Ադրբեջանի իշխանությունները հայկական ինքնավարության սահմանները գծելիս այնպես էին կտրատել և մարզից դուրս թողել Արցախի ժողովրդին պատկանող հողերը, որ մարզն արդեն 1925-ին դարձել էր ամենասակավահողը ողջ ԱդրԽՍՀ-ում. ԼՂԻՄ-ում մեկ շնչին բաժին էր հասնում մոտ 0.5-1 հա հողակտոր, մինչդեռ հարևան Աղդամի և Ջեբրայիլի շրջաններում, օրինակ, մեկ շնչին բաժին էր ընկնում մոտ 9700 անգամ ավելի մեծ՝ մոտ 4360 հա հողակտոր[2]:

ՆԿԱՐ 2[3]

НАГОРНО-КАРАБАХСКАЯ А О
МАСШТАБ 1:3 000 000
10 0 10 20 км
Границы государственные
Границы союзных республик
Границы автономных областей
Центры автономных областей
Центры районов
Города областного подчинения
Города районного подчинения и поселки городского типа
Прочие населенные пункты
Железные дороги
Главные безрельсовые дороги
Мелиоративные каналы
Пересыхающие реки
Отметки высот
Степанакерт
Шуша
Гадрут
Мардакерт
Агдам
Карягино
Кельбаджар
Лачин
Джебраил
Зангилан
Мингечаур
Геранбой
Шамхор
Дашкесан
Казах
Ордубад
Нахичевань
Джульфа
Ленинаван
Ереван
Севан
Гокча
Вардени



ՆԿԱՐ 3 – Նկարում պատկերված քարտեզներից առաջինը ՀԽՍՀ-ի պաշտոնական քարտեզն է (Большая Советская Энциклопедия, 1-ое изд., т. 3, Москва, 1926 г., с. 417), երկրորդը՝ ԱդրԽՍՀ-ի պաշտոնական քարտեզը (Большая Советская Энциклопедия, 2-ое изд., т. 1, Москва, 1949 г., с. 434-435 (вставка)): Այս քարտեզներում հստակ երևում են ԼՂԻՄ-ի սահմանների կամայական փոփոխությունները, որոնց արդյունքում մարզի տարածքը նկատելիորեն նվազել է և կորցրել Խորհրդային Հայաստանի հետ իր ընդհանուր սահմանը:

Քարտեզներից պարզ երևում է, որ նշված ժամանակաշրջանում ՀԽՍՀ-ի արևելյան սահմանագիծը ևս ենթարկվել է փոփոխության. զգալի տարածքներ ՀԽՍՀ-ից անցել են ԱդրԽՍՀ-ի ենթակայության տակ, Հայաստանի տարածքում առաջացել են 3 ադրբեջանական անկլավներ, Արծվաշեն գյուղն էլ, տարածքային կորուստների հետևանքով, իր հերթին, վերածվել է հայկական անկլավի Ադրբեջանի կազմում:

Ալվինա Աղաբաբյան, **ԼՂԻՄ-ի տարածքային յուրացման որոշ դրսևորումներ 1920-1930-ական թթ.** – Հոդվածում ներկայացված է 1920-1930 թթ Խորհրդային Ադրբեջանի ազգային խտրական քաղաքականությունը՝ ուղղված իրեն բռնակցված ԼՂ-ի ընդամենը մի հատվածի վրա կազմավորված ԼՂԻՄ-ի տարածքային յուրացմանն ու թրքացմանը: Ցույց է տրվում, թե ինչպես են երկու տասնամյակի ընթացքում ԼՂ ինքնավար մարզի սահմաններն ու տարածքները շարունակ վերաձևվել են և ենթարկվել փոփոխությունների, որոնց արդյունքում իրենց աշխարհագրական դիրքով և ռազմավարական նշանակությամբ Սյունիքի և Արցախի միջև կարևոր կապող օղակ հանդիսացող մի շարք հայկական բնակավայրեր և հողատարածքներ աստիճանաբար պոկվել են մարզից և բռնակցվել նորաստեղծ ադրբեջանական շրջաններին:

Альвина Агабабян, **Некоторые проявления присвоения территорий НКАО в 1920-1930 гг.** – В статье представлена дискриминационная национальная политика Азербайджана направленная на присвоение и тюркизацию территорий сформированной лишь на части аннексированного Нагорного Карабаха НКАО. Также показано, как в течении двух десятилетий границы и территории НКАО постоянно перекраивались и менялись, в результате чего ряд армянских поселений и территорий, которые своим географическим расположением и стратегическим значением являлись связующим звеном между Сюником и Арцахом, постепенно были оторваны от автономной области и аннексированы к новоявленным азербайджанским районам.

Alvina Aghababyan, Some manifestation of territorial appropriation of NKAO in 1920-1930's – The article presents the discriminatory national policy of Azerbaijan aimed at appropriation and turkification of the territories of NKAO formed only on a part of the annexed Mountainous Karabakh. It also shows how within two decades the borders and territories of NKAO have constantly been recarved and changed. As a result some Armenian settlements and territories, which were the connecting link between Syunik and Artsakh by their geographic location and strategic significance, were gradually severed from the autonomous region and annexed to the newly created Azerbaijani districts.

Ալվինա Աղաբաբյան – ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի հայցորդ, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի ամբիոնի դասախոս, ԵՊՀ ռազմավարական հետազոտությունների ԳՀ լաբորատորիայի ղեկավար